№ 226 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16 № 226

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакціи „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Վաղը, կիրակի, հոկտեմբերի 17 ին, Վանքի աւագ եկեղեցում ս. պատարագից յետոյ, 12 ժամին, կը կատարվի մահվան տարելիցի կարգ՝ Օղեսայի հանգուցեալ առաջնորդ՝

ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԵԶՆԻԿԵԱՆ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ

համար։

1—1

Անտա Գէորգեան, Շուշանիկ, Հեղինէ, Նուարդ և Ստեփան Յովհաննէսեան Տէր-Նիկողայոսեանցները խորին վշտով հաղորդում են ազգականներին և ծանօթներին առաջինը իր սիրեցեալ օրդու, իսկ միւսները իրանց անմոռանալի և թանկագին եղբօր՝

ԵՂԻՇԷ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Կօրուլէթում սեպտեմբերի 5-ին, իսկ թաղումը Բաթումում սեպտեմբերի 8-ին և խնդրում են նրա յիշատակը յարգողներին հոգի բերել կիրակի ամսի 17-ին, Նորաշէնի ս. Յարութիւն եկեղեցին, (Սիօնի սօրօրի մօտ), նրա մահվան քառասուն օրեայ հոգեհանգստին ներկայ լինելու։

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակաւոր լուութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հէյդարշահ.

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԼՌՈՒԹԻՒՆ

—

Հեռագիրները մի քանի ժամանակից ի վեր տեղեկութիւններ չեն բերում պատերազմական ընդհարումների մասին։ Իսկ լրագիրները զբաղված են եղած պատերազմական գործողութիւնների գնահատութեամբ և սպանվածների ու վիրաւորվածների թուերի որոշման հարցով։ Սկսած հոկտեմբերի 6-ից օրքերի դիրքերում տիրում է լուութիւն։

Շնորհիւ սաստիկ անձրևների, որոնք առատ տեղում էին մի քանի օր, ճանապարհները շատ վատացել են Մանջուրիայում։ Շախէ գետը, որի եզերներում գտնվում են պատերազմող կողմերի օրքերը, յորդացել է և դրանով ժամանակաւորապէս դժուարացրել է օրքերի ազատ շարժումը։ Ռուսները շինել են Շախէ գետի վրա անցնելու յարմարութիւններ։ Ինչ վերաբերում է Խունխէ գետին, որ հոսում է Մուկդէնի մօտով հարաւից, նա բաւականաչափ կամուրջներ ունի։ Այդ երկու գետերի միջև գտնվող ռուսական դիրքերը ամրացրված են։ Նոյնպէս ամրացված են արևմտեան դիրքերը Խունխէ գետի և Սինմինտինի ճանապարհի միջև։ Շախէպուից դէպի արևելք գետեղված են ռուսական, իսկ դէպի արևմուտք եապօնական օրքերը։

Հակառակ կողմերը շարունակում են առաջ տանել իրանց պատրաստութիւնները։ Եապօնացիները, ինչպէս և ռուսները, պատնէշներ են շինում իրանց դիրքերում, առաջապահ գնդերը մի քանի կէտերում մօտեցել են միմեանց մինչև 600—1000 քայլ միմեանցից հեռու։

Բերլինի լրագիրները ներկայ կարճատև անգործութեան վրա նայում են, իբրև մի լուութեան վրա փոթորկից առաջ։ Նախորդ ութ օրվայ ընթացքում տեղի ունեցած պատերազմներում վիրաւորված և սպանված մարդկանց թիւը ահագին է եղել։ Եւ հասկանալի է թէ ինչու։ Պատերազմը երկու կողմի ուժգին գրոհների շնորհիւ, շատ մեծ է եղել։ Երկու կողմից մասնակցում են եղել կէս միլիոն մարդ։

Անգլիական «Central News» լրագրի թղթակիցը հաղորդում է Տօկիօյից, որ այնտեղ կարծիք կայ թէ Կուրոպատկինը նախ քան հիւսիս նահանջելը կը փորձէ մի անգամ էլ ընդհանուր յարձակում գործել եապօնացիների վրա. սակայն հաւանական է, որ Կուրոպատկինը այդ գործէ ոչ թէ նահանջելու նպատակով, այլ որպէս զի հիմնաւոր կերպով քայքայած լինի եապօնական զօրքի կազմը։

Արտասահմանեան մամուլի մէջ քննվում է պատերազմող կողմերի զօրքերի աւելացնելու հարցը։ Զօրքերի թիւը, անկասկած, կարելի է աւելացնել. սակայն այդ աւելացումը սահման ունի, որովհետև զօրքը պահանջում է մթերքներ թէ ուտելու և թէ պատերազմելու համար։ Այժմ պարզված է, որ զօրաբանակները որոշ ձգտում ունեն դէպի իրանց անդող ու կերակրող կենտրոնները։ Շնորհիւ երկաթուղիների բացակայութեան, դժուար է մարդկանց երթևեկութիւնը և ապրանքափոխադրութիւնը կատարել բաւարար և արագ կերպով։ Եղած երկաթուղիները մեծ և լարված գործունէութեան մէջ են։

Քաղաքական աշխարհը սպասում է պատերազմական գործողութիւնների վերսկսման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Ընտրողական սկզբունքով գոյութիւն ունեցող հասարակական հիմնարկութիւններ շատ չը կան մեզանում։ Մենք ունենք այդպիսի հիմնարկութիւնների մի տեսակը միայն—քաղաքային ինքնավարութիւններ։ Իբրև ընտրվող մարմիններ, իբրև հասարակութեան ներկայացուցիչներ, նրանք ամենից առաջ և ամենից շատ պիտի հատապատասխանեն կարեւոր և առաջնակարգ պահանջին, այն է, ընտրվողը հաշիւ է տալիս ընտրողին։ Չը կայ առանց այս սկզբունքի ընտրական հիմնարկութիւն։ Հասարակութիւնը պիտի միշտ վերահսկողութիւն ունենայ այն գործերի վրա, որոնք կատարվում են նրա ընտրածների ձեռքով քաղաքային խորհրդարաններում։ Վերահսկողութիւնը կարող է իրական և բազմակողմանի լինել միայն այն դէպքում, երբ ընտրական հիմնարկութիւնը լայն բաց է անում իր դռները հրապարակայնութեան առաջ, այնտեղ կատարվող ամեն մի գործ դիւանագաղտնիք չէ դառնում, այլ մատչելի է հասարակութեան։

Ո՞րքան են մեր քաղաքային ինքնավարութիւնները կատարում ընտրական հիմնարկութիւնների այդ տարրական պարտաւորութիւնները։ Մեզանում չը կայ հասարակական զարգացած կարծիք. մենք մեր դատողութիւններ, մեր ձեռնարկութիւնների մէջ ճնշված ենք։ Եւ մեր ընտրական հիմնարկութիւններն էլ ստացել են բիւրօկրատական կերպարանք. նրանք կատարում են հասարակական մարմնի ձևականութիւնները միայն, նրանք հաշիւներ տալիս են միայն այնպէս, ինչպէս իրանք են կամենում. դրանք հաշիւներ են, որոնք ասում են ընտրողին թէ ամեն ինչ լաւ է գընում, թէ ազգաբնակութեան վճարած տուրքերը իրանց նպատակին հասնում են և հասարակութեան իւրաքանչիւր պահանջը, շահը սրբութեամբ է պահպանվում քաղաքի ներկայացուցիչների մի հանամուռ ջանքերով։ Պաշտօնապէս ամեն ինչ լաւ է, թղթի վրա քաղաքային Ուղղաւան էլ, Դուման էլ գործ կատարողներ, աշխատողներ են։ Բայց ինչպէս է իրականութեան մէջ։ Այստեղ արդէն պաշտօնական կոկիկ հաշիւներ չեն պէտք, այլ ազնիւ, անշահասէր գործիչների մերկացումներ. այստեղ արդէն ճարպիկ պատճառաբանութիւններ չեն հարկաւոր, այլ անկեղծ խոստովանութիւն, մաքուր սրտի զգացմունքներ են հարկաւոր։

Մեր երկրի քաղաքային ինքնավարութիւնների պատմութիւնը այս օրերս մի շատ հետաքրքրական լուսաբանութեամբ հարստացաւ։ Բագուի նախկին քաղաքագլուխ պ. Ա. Նովիկով «Образованіе» ամսագրի մէջ սկսել է տպագրել իր յիշատակարանը Բագուի քաղաքային գործերի մասին։ Երևոյթը բացառիկ է, բայց ոչ միանգամայն անհասկանալի, եթէ ի նկատի ունենանք պ. Նովիկովի անձնաւորութիւնը։ Լինելով գրական գործիչ, համակրելի ուղղութեան և սկզբունքների տէր մի մարդ, նա Բագուի քաղաքագլուխ դառնալու հէնց առաջին օրերից ամեն միջոց գործ էր դնում, որ քաղաքային գործերը անյայտութեան մէջ չը մնան, որ նրանք գաղտնիք չը լինեն հասարակութեան համար, այլ դրված լինեն հրապարակի վրա։ Նրա նախաձեռնութեամբ էր, որ քաղաքային Ուղղաւանի նիստերին էլ ներկայ էին լինում մամուլի լրատուները, գնալ. նա շատ զարմացաւ, երբ քաղաքից դուրս, այն գիւղում, ուր պէտք է դիմաւորէին զաւվարներին, տեսաւ հաջի Իբադի շքեղ վրանը խփված. նա ևս եկել էր փիշվազ։ Երբ զաւվարների կարավանը յայտնվեց հեռուից և լսվեց չավուշի (ուխտաւորների կարավանի կարապետի) ձայնը, Աբբասը սրարշաւ չափ ձգեց ձին և, նկատելով հօրը, իջաւ ձիից, մօտեցաւ, համբուրեց հօր ձիի ասպանդակը և ընկաւ ձիու առաջ։ Հանելով գլուղ, հայրը իջաւ ձիից. Աբբասը համբուրեց նրա ձեռքը, իսկ հայրը ուրախութիւնից արտասվում էր, ոհ, երկար արտասվում էր, տեսնելով իր որդուն գեղեցիկ երիտասարդ դարձած։ «Մեծ է Ալլահի ողորմութիւնը—արտասանեց հայրը—Ինչ չար և մռայլ մտքեր էին խռովում հոգիս. կարծում էի մի դժբաղդութիւն է պատահել, որովհետև ոչ մի նամակ չէի ստանում քեզանից, որդիս, ոչ մի նամակիս պատասխանը չը կար»։

—Բայց ես շարունակ նամակ եմ գրել, հայրը, իսկ քեզանից ոչ մի նամակ չեմ ստացել, բացականչեց Աբբասը։

Այդ միջոցին ընդ առաջ դուրս եկաւ հաջի Իբադը։ Մեծարանքի և ամենամօտ բարեկամութեան որպիսի զեղուն արտայայտութիւններով նա երիցս ողջագուրվեց հաջի Հուսէյնի հետ. «մեր աչքը լոյս, մեր գլխին թագ տրվեց այսօր, հաջի Հուսէյն, ասում էր նա, կարծես այսօր երկրորդ անգամ աշխարհ եկանք. տես, օրհնեալ, միթէ այդքան կը վախեցնեն մեզ. մի գլուխ գնացիր ու էլ ոչ մի նամակ, ոչ մի գետին, որ հոսում է Մուկդէնի մօտով հարաւից, նա բաւականաչափ կամուրջներ ունի։ Այդ երկու գետերի միջև գտնվող ռուսական դիրքերը ամրացրված են։ Նոյնպէս ամրացված են արևմտեան դիրքերը Խունխէ գետի և Սինմինտինի ճանապարհի միջև։ Շախէպուից դէպի արևելք գետեղված են ռուսական, իսկ դէպի արևմուտք եապօնական օրքերը։

Հակառակ կողմերը շարունակում են առաջ տանել իրանց պատրաստութիւնները։ Եապօնացիները, ինչպէս և ռուսները, պատնէշներ են շինում իրանց դիրքերում, առաջապահ գնդերը մի քանի կէտերում մօտեցել են միմեանց մինչև 600—1000 քայլ միմեանցից հեռու։

Բերլինի լրագիրները ներկայ կարճատև անգործութեան վրա նայում են, իբրև մի լուութեան վրա փոթորկից առաջ։ Նախորդ ութ օրվայ ընթացքում տեղի ունեցած պատերազմներում վիրաւորված և սպանված մարդկանց թիւը ահագին է եղել։ Եւ հասկանալի է թէ ինչու։ Պատերազմը երկու կողմի ուժգին գրոհների շնորհիւ, շատ մեծ է եղել։ Երկու կողմից մասնակցում են եղել կէս միլիոն մարդ։

Անգլիական «Central News» լրագրի թղթակիցը հաղորդում է Տօկիօյից, որ այնտեղ կարծիք կայ թէ Կուրոպատկինը նախ քան հիւսիս նահանջելը կը փորձէ մի անգամ էլ ընդհանուր յարձակում գործել եապօնացիների վրա. սակայն հաւանական է, որ Կուրոպատկինը այդ գործէ ոչ թէ նահանջելու նպատակով, այլ որպէս զի հիմնաւոր կերպով քայքայած լինի եապօնական զօրքի կազմը։

Արտասահմանեան մամուլի մէջ քննվում է պատերազմող կողմերի զօրքերի աւելացնելու հարցը։ Զօրքերի թիւը, անկասկած, կարելի է աւելացնել. սակայն այդ աւելացումը սահման ունի, որովհետև զօրքը պահանջում է մթերքներ թէ ուտելու և թէ պատերազմելու համար։ Այժմ պարզված է, որ զօրաբանակները որոշ ձգտում ունեն դէպի իրանց անդող ու կերակրող կենտրոնները։ Շնորհիւ երկաթուղիների բացակայութեան, դժուար է մարդկանց երթևեկութիւնը և ապրանքափոխադրութիւնը կատարել բաւարար և արագ կերպով։ Եղած երկաթուղիները մեծ և լարված գործունէութեան մէջ են։

Քաղաքական աշխարհը սպասում է պատերազմական գործողութիւնների վերսկսման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Ընտրողական սկզբունքով գոյութիւն ունեցող հասարակական հիմնարկութիւններ շատ չը կան մեզանում։ Մենք ունենք այդպիսի հիմնարկութիւնների մի տեսակը միայն—քաղաքային ինքնավարութիւններ։ Իբրև ընտրվող մարմիններ, իբրև հասարակութեան ներկայացուցիչներ, նրանք ամենից առաջ և ամենից շատ պիտի հատապատասխանեն կարեւոր և առաջնակարգ պահանջին, այն է, ընտրվողը հաշիւ է տալիս ընտրողին։ Չը կայ առանց այս սկզբունքի ընտրական հիմնարկութիւն։ Հասարակութիւնը պիտի միշտ վերահսկողութիւն ունենայ այն գործերի վրա, որոնք կատարվում են նրա ընտրածների ձեռքով քաղաքային խորհրդարաններում։ Վերահսկողութիւնը կարող է իրական և բազմակողմանի լինել միայն այն դէպքում, երբ ընտրական հիմնարկութիւնը լայն բաց է անում իր դռները հրապարակայնութեան առաջ, այնտեղ կատարվող ամեն մի գործ դիւանագաղտնիք չէ դառնում, այլ մատչելի է հասարակութեան։

Ո՞րքան են մեր քաղաքային ինքնավարութիւնները կատարում ընտրական հիմնարկութիւնների այդ տարրական պարտաւորութիւնները։ Մեզանում չը կայ հասարակական զարգացած կարծիք. մենք մեր դատողութիւններ, մեր ձեռնարկութիւնների մէջ ճնշված ենք։ Եւ մեր ընտրական հիմնարկութիւններն էլ ստացել են բիւրօկրատական կերպարանք. նրանք կատարում են հասարակական մարմնի ձևականութիւնները միայն, նրանք հաշիւներ տալիս են միայն այնպէս, ինչպէս իրանք են կամենում. դրանք հաշիւներ են, որոնք ասում են ընտրողին թէ ամեն ինչ լաւ է գընում, թէ ազգաբնակութեան վճարած տուրքերը իրանց նպատակին հասնում են և հասարակութեան իւրաքանչիւր պահանջը, շահը սրբութեամբ է պահպանվում քաղաքի ներկայացուցիչների մի հանամուռ ջանքերով։ Պաշտօնապէս ամեն ինչ լաւ է, թղթի վրա քաղաքային Ուղղաւան էլ, Դուման էլ գործ կատարողներ, աշխատողներ են։ Բայց ինչպէս է իրականութեան մէջ։ Այստեղ արդէն պաշտօնական կոկիկ հաշիւներ չեն պէտք, այլ ազնիւ, անշահասէր գործիչների մերկացումներ. այստեղ արդէն ճարպիկ պատճառաբանութիւններ չեն հարկաւոր, այլ անկեղծ խոստովանութիւն, մաքուր սրտի զգացմունքներ են հարկաւոր։

Մեր երկրի քաղաքային ինքնավարութիւնների պատմութիւնը այս օրերս մի շատ հետաքրքրական լուսաբանութեամբ հարստացաւ։ Բագուի նախկին քաղաքագլուխ պ. Ա. Նովիկով «Образованіе» ամսագրի մէջ սկսել է տպագրել իր յիշատակարանը Բագուի քաղաքային գործերի մասին։ Երևոյթը բացառիկ է, բայց ոչ միանգամայն անհասկանալի, եթէ ի նկատի ունենանք պ. Նովիկովի անձնաւորութիւնը։ Լինելով գրական գործիչ, համակրելի ուղղութեան և սկզբունքների տէր մի մարդ, նա Բագուի քաղաքագլուխ դառնալու հէնց առաջին օրերից ամեն միջոց գործ էր դնում, որ քաղաքային գործերը անյայտութեան մէջ չը մնան, որ նրանք գաղտնիք չը լինեն հասարակութեան համար, այլ դրված լինեն հրապարակի վրա։ Նրա նախաձեռնութեամբ էր, որ քաղաքային Ուղղաւանի նիստերին էլ ներկայ էին լինում մամուլի լրատուները,

մի բան, որ քաջութիւն ու բարեխղճութիւն չունեցաւ անելու նոյն իսկ իր ինտելիգենտ անդամների բազմութեամբ այնքան անտեղի կերպով պարծեցող Թիֆլիսի քաղաքային Դուման։

Այդպիսի սկզբունքներով ղեկավարվող մի մարդ, հեռանալով հասարակական ծառայութիւնից, չէր կարող լուռ մնալ. և նա իր առաջին պարտքը համարեց հասարակութեան առջև դնել այն ամենը, ինչ նա տեսել ու զգացել է Բագուում իբրև քաղաքի գլուխ և իբրև կրթված մարդ։ Առ այժմ հրատարակված է նրա յիշատակարանի մի մասը միայն։ Մենք կարդացինք այդ մասը լարված ուշադրութեամբ, յափշտակված։ Պ. Նովիկով կարողացել է տաղանդաւոր գրչով լուսաբանել մեր երկրին յատուկ դառն իրականութիւնը։ Կարդում էք և ապշում. կարդում էք և չէք հաւատում թէ հասարակական գործը կարող է տարիներով այնպիսի սարսափելի պայմանների մէջ գտնվել։ Հեղինակը համարձակ է իր մերկացումների մէջ. նա գրաւում է ընթերցողին նախ և առաջ նրանով, որ անկեղծաբար խոստովանում է իր թերութիւններն էլ, խոստովանում է թէ ինչ յոյսերով էր գնացել Բագու, ինչ միամիտ ոգևութեամբ էր լցված և ինչեր տեսաւ։

Չը կայ, կարծեմ, մի մարդ, որ մի բարի խօսք ունենայ նրա մասին։ Կեղտոտ, անբարեկարգ մի քաղաք, որ, սակայն, միլիոններ է տալիս իր բնակիչներին։ Այդ քաղաքի ինքնավարութեան տարեկան եկամուտը մօտ $1^1/_2$ միլիոն ռուբլի է։ Բայց ինչ օգուտ, երբ նրան կառավարող հիմարկութիւնը եւրոպական սկզբունքներով ձևած մի ասիական անկարգութիւն է, Աւգեան ախոռներ, ինչպէս շատ արդարացի կերպով անուանում է նրան պ. Նովիկովը։

Մենք առիթ կունենանք հետզհետէ ծանոթացնելու մեր ընթերցողներին պ. Նովիկովի վերին ասիճանի հետաքրքրական գրուածքի զանազան մասերի հետ։ Առ այժմ վերցնում ենք մի կտոր, որ վերաբերում է «Каспій» լրագրին։ Պ. Նովիկով երկար է խօսում այս լրագրին մասին, որովհետև կոյր ու նեղսիրտ թայֆայականութեան ներկայացուցիչ է նա, որ խոչնդոտ է դարձել պ. Նովիկովի առջև, բայց իբրև մամուլի օրգան էլ վերին ասիճանի անհրապոյր դէմք ունի։ Սկզբում «Каспій»-ի ղեկավարները պ. Նովիկովի կողմնակիցներ էին, քանի որ կարծում էին, թէ իրանց ջանքերով ընտրված քաղաքագլուխը իրանց հլու գործիքը կը դառնայ։ Յանկարծ տեսնում են, որ նա ոչ միայն իբրև քաղաքագլուխ չէ ենթարկվում իրանց թայֆայական ձգտումներին, այլ և իբրև գրող էլ հեռու է պահում իրան «Каспій»-ից։ Հետաքրքրական է թէ ինչպէս է պ. Նովիկով բացատրում վերջին հանգամանքը։ Նա ասում է.

Ընդհանուր բնաւորութիւն ունեցող յօդուածների մէջ պատահում էին այնպիսիներ, որոնց տեղն է «Московскія Вѣдомости»-ն։ Բայց ինչ առանձնապէս զզուելին էր—դա նրանց մահմեդական ազգամոլութիւնն էր, նացիոնալիզմը։ Այս շրջանի մէջ աչքի էր ընկնում «Каспій»-ի աշխատակիցը, մի և նոյն ժամանակ դումայի ձայնաւորը էր և իմ ամենաչարամիտ հակառակորդը, որ Ախմէդ-բէկ Աղաէվ։ Շատերը մի քանի յօդուածների հիման վրա կարող էին կարծել թէ խմբագրութիւնը ձգտում է վերանորոգել մահմեդականութիւնը ազատութեան և լուսաւորութեան ոգով։ Բացի համակրանքից այսպիսի մի ձգտումը ուրիշ վերաբերմունքի չէր արժանանայ։ Տարաբախտաբար, այդ քաղաքակրթական տենդենցիան միացած էր այնպիսի մի անհամբերողութեան հետ դէպի միւսները, որ աւելի ժոտիկ ծանօթանալով նրան, ամեն մէկը կորցնում էր ոչ միայն համակրանքը դէպի լրագիրը, այլ և յարգանքը։ Դա նոյն խիստ նացիոնալիզմն էր, որ այնքան զզուելի է իր բոլոր երևոյթների մէջ։ Կրթական տենդենցիաները միայն դիմակ էին։ «Каспій» ի մի քանի յօդուածները ուղղակի վրդովեցուցիչ էին։ Սուլթանի փառաբանութիւնը խառնված էր, օրինակ, մակեդոնական շարժումը դատապարտելու հետ։ Երբեմն պատահում էին այնպիսի յօդուածներ, որոնց երևան գալը կարելի էր միայն բացատրել նրանով, որ գրողը կատարելապէս արհամարհում է կուլտուրական ընթերցողի կարծիքը և ուզում է միայն տգէտ թուրքերի գովասանքներին արժանանալ։ Այսպէս յիշում եմ մի յօդուած, որ նուիրված էր դպրոցական գործին։ Յօդուածի մէջ ասված էր, թէ վատ չէր լինի, եթէ մենք թիւրքիայից դասեր առնէինք, մի և նոյն ժամանակ նկարագրվում էին թիւրքիայի բէալական դպրոցները իբրև նմանվելու արժանի օրինակներ։ Մի ուրիշ յօդուած, որ աւելի յետոյ երևաց, փառաբանում էր թիւրքերի համբերողութիւնը դէպի հայերը։ Որպէս զի ձեռքը շարժվէր այդպիսի յօդուածներ գրելու, պէտք էր, ի հարկէ, jeter sa langue aux chiens, ինչպէս ասում են ֆրանսիացիները։

Ամեն մի մարդու, բարեխիղճ մարդ, ընդհանրապէս, պիտի երես դարձներ Ախմէդ-բէկ Աղաեվի ոգևորութեան այդ լպիրշ պտուղներից։ Պ. Նովիկովը այդպէս էլ արաւ։ Բայց պ.պ. Աղաեվները, Թոփչիբաշեվները նոյն իսկ այդպէս վարվելու իրաւունքն էլ չեն տալիս մարդուն։ Պէտք է հպատակվել, պէտք է թթու նացիոնալիզմի թոյնը ընդունել իբրև երկնային բարիք, թէ չէ...

Երբ այլ ևս հանդերութիւն չը մնաց,—շարունակում է պ. Նովիկով—ես ոչ միայն դադարեցի «Каспій»-ի մէջ յօդուածներ գրելուց, այլ նոյն իսկ հերքումներ էլ չէի տպում այնտեղ։ Հերքել կարելի է և օգտակար է, երբ մարդիկ սխալվում են, բայց երբ յարձակումները անձնական բնաւորութիւն ունեն, երբ յարձակվողը գործ չունի ճշմարտութեան հետ,—արժէ՞ ժամանակ և թանաք կորցնել։

Եւ հեղինակը բերում է փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ միջոցների էր դիմում մահմեդական նացիոնալիզմի օրգանը իրան չը համակրող մի մարդուց և գործիչից վրէժ հանելու համար։ Այդ միջոցները մենք այստեղ չենք պատմի։ Կասենք միայն որ տարրական օրինաւորութիւնը, մաքրասիրութիւնը քիթը պիտի բռնէ դրանց կեղտերի գարշահոտութիւնից ազատ լինելու համար...

ՆԱՄԱԿ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, հոկտեմբերի 13-ին

Սեպուհ պարտականութիւն եմ համարում ինձ Ձեր պատուական լրագրի միջոցով արտագին շնորհակալութիւնս յայտնել և օրհնել այն բոլոր հաստատութիւններին և անձերին, որոնք անձամբ, հեռագրով և նամակով շնորհաւորեցին իմ նշանակումը յառաջնորդութիւն թեմին հայոց Վրաստանի և Իմերէթի։

Գարեգին եպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, հոկտեմբերի 12 ին Բագու քաղաքում խօլերայով հիւանդացել է միայն մի թուրք. մեռել են 4 հոգի—մէկն այդ հիւանդացածը, իսկ երեքը նախկին հիւանդներից։

—

Նորերս վախճանված Ս. Կ. Զուբալովի եղբայրներն անցեալ օրը գրաւոր կերպով տեղեկացրին Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշխան Չերքեզովին, որ նրանք նուիրում են քաղաքին 100,000 ր. երեխաների համար հիւանդանոց շինելու, ի յիշատակ իրանց հանգուցեալ եղբօր։

—

Նոյեմբերի 23-ին Բագուում մտադրութիւն կայ հրաւիրել Բագուի նաւթարդիւնաբերողների XIX-դ համամաժողովը։ Ներկայումս մշակվում է համաժողովի ծրագիրը, որի մէջ, ի միջի այլոց, մտնելու են հետևեալ հարցերը. նաւթարդիւնաբերողների խորհրդի և յանձնաժողովների գործունէութեան հաշուի քննութիւնը՝ վագոնների բաշխման, Բագուի նաւթահանքերի պաշտպանութեան, ժողովրդական տներ շինելու և ծառայողների ու բանուորների համար զուարճութիւններ կազմելու վերաբերութեամբ. 1905 թ-ի բիւդժէտի քննութիւնը և դրա հետ կապված՝ նաւթահանքերի և գործարանների շրջանների բարեշինութեան խնդիրը և այլն։

—

Պետերբուրգում լուրեր են պտտում, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ ներկայումս հարց է յարուցված աւելացնել համալսարաններում հրէայ ուսանողների օրէնքով որոշված թիւը։ Ներկայ ուսումնական տարում մտադրութիւն կայ հրէայ ուսանողների լրացուցիչ ընդունելութիւն անել բոլոր համալսարաններում՝ համաձայն նոր որոշված թուի կամ չափի։

—

Օդեսայից հեռագրում են «Р. С.» լրագրին, որ տղամարդ բժիշկների պակասութեան պատճառով, որ առաջացել է Հեռաւոր Արևելքի պատերազմական գործողութիւններից, կինբժիշկներին թոյլատրված է լինել վարձով ծառայող կամ օրդինատոր բոլոր կլինիկաներում։

—

Պերմի նահանգը հրատարակված է խօլերայի տեսակէտով անբարեյաջող կամ արդէն վարակված խօլերայով։

—

Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան էժանագին բնակարաններում, ուր սովորաբար 200 հոգի ապաստան են գտնում, այս օրերս խօլերայով հիւանդանալու 4 դէպքեր է եղել. այդ պատճառով թաղական բժիշկ Միրաքեանը կղզիացրել է այդ ամբողջ շէնքը։ Ներկայումս այնտեղ կղզիացած են 125 հոգի, որոնցից 30-ը տղամարդ, 38-ը կին և 57 ը երեխաներ են։ Նրանց բոլորի ապրուստն իր վրա է առել հայոց Մարդասիրական Ընկերութիւնը։ Կղզիացրած 30 տղամարդկանցից 20 ը զանական գործարանների ծառայողներ են, որոնց մասին բժիշկ Միրաքեանն արդէն իմաց է տուել գործարարատէրերին և խնդրել, որ նրանց չը զրկեն օրավարձից կամ ռոճկից։ Այդ առիթով գործարանատէրերն արդէն համաձայնութիւն տուել են։

—

Թիֆլիսի արուարձաններից մէկից, Սաբուրթալօից, հոկտեմբերի 12 ին Միքայէլեան հիւանդանոց տեղափոխեցին մի ամբողջ ընտանիք-Բեզպրօզվանով ընտանիքը. հայրը, մայրը, երկու աղջիկները և պառաւ տատը։ Դրանք բոլորն էլ թունաւորվել էին սունկով։ Տիկին Բեզպրօզվանովը գնում է սունկը փողոցում վաճառող մի շրջիկից և պատրաստում։ Պարոնը և իր երկու աղջիկները շատ կերած լինելով, հիւանդանոցի ճանապարհին արդէն մեռան, իսկ կինը և պառաւ տատը, ճաշի սկզբից և եթ սրտի խառնոց զգալով, շատ քիչ էին կերել. նրանք այժմ ապաքինվում են։

—

Ներկայ հոկտեմբերի 4-ին Վիլնայի նահանգական դատարանում քննվում էր մի գործ՝ երդուեալ դատաւորների մասնակցութեամբ. երդուեալներն իրանց միջից աւագ ընտրեցին հրէայ բժշկապետ Վ. Զ. ին։ Բայց նահանգական դատարանի նախագահը յայտնեց երդուեալ դատաւորներին, որ ռուսական օրէնքով աւագ կարող են ընտրվել միայն քրիստոնէական դաւանութեան պատկանող անձերը. այդ պատճառով առաջարկեց մի ուրիշ անձ ընտրել իբրև աւագ։

—

Օդեսայի լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Վ. Գ. Գլազովը, համաձայն Օդեսայի կանանց մանկավարժական կուրսերի խորհրդի խնդրքի, թոյլատրել է կուրսերում ընդունել 21 հրէայ ուսանողուհիներ էլ, բացի կանոնադրութեան թոյլատրած որոշ տոկոսը։ Իսկ կուրսերի կանոնադրութեան համաձայն՝ բոլոր ուսանողուհիների միայն 20% ը կարող են լինել հրէուհիներ։

—

Հոկտեմբերի 12 ի առաւօտեան $7^1/_2$ ժամին Բաթումի ծովափի վրա ատրճանակի գնդակով վիրաւորեցին քաղաքի V մասի պրիստաւ Ֆիլիմոնովին։ Խփողը փախել է ամբոխի մէջ և աղատվել, այն ինչ վիրաւոր պրիստաւը ատրճանակը կրակելով ընկած է եղել նրա հետևից։

—

տեղեկութիւն չես ուղարկում. ձանձրացայ քեզ նամակ ուղարկելով զաւվարների միջոցով. նոյն իսկ յատուկ զասիդներ (հետևակ սուրհանդակ) ուղարկեցի. իմ գործակալներիս Բաղդադ, Բասրա ամեն տեղ գրեցի, որ իմանան ուր լինելդ, փող հասցնեն քեզ. ամենքը գրում էին, թէ չեն իմանում ոլտոդ հա։ Եւ, իրօք, որտեղ էիր այսքան ժամանակ, ինչո՞ւ ինձ, ընտանիքդ լեղոպատ ես մնում։ Բայց փառք Ալլահին, փառք նրա Մ.ծ Մալգարէին և 12 իմամներին. եկար ողջ և առողջ»։

Եւ առանց թոյլ տալու ապշած հօրը մի խօսք արտասանելու, հաջի Իբադը բռնեց նրա թեւից և տարաւ վրանը, ուր մի քանի խոնջաններ էին դրված մէջ տեղը, ծանրաբեռնված քաղցրաւենիքներով, նաբատներով, պտուղներով և բազմաթիւ փիշվազաւորներ (ընդ առաջաւորներ) էին նստած գորգերի վրա։

Երբ նրանք մտան վրանը, բոլոր հիւրերը ոտքի կանգնեցին. ապա ամենքը նստեցին, նորից ոտքի կանգնեցին, նորից նստեցին, սալամ տուին, սալամ առին, սալավաթ քաշեցին և ամեն կողմից ասացին. «ուխտդ ընդունելի, հաջի, ուխտդ ընդունելի»։

Ապա ամենքը լռեցին. լուռ էր և հաջի Հուսէյնը. սպասում էին, ի նշան յարգանաց, որ հաջի Իբադը խօսէ։

Աբբասը և Զէյնալը, արաները հագած, ձեռները կրծքին դրած, կանգնեցին անշարժ վրանի մուտքի երկու կողմում. որդուն անվայել է հօր առաջ նստել։

Վերջապէս հաջի Իբադը, երբ սպասաւորները դէյլաններ մատուցին, իր դէյլանը թաւալանելով իր կողքին նստեցրած հաջի Հուսէյնին, սկսեց խօսել. նա նորից զարմանք յայտնեց, որ հաջին նամակ չէր գրում, տեղը չէր յայտնում։

—Բայց ես էլ սաստիկ զարմանում էի, որ ոչ նամակ եմ ստանում ձեզանից, տնից, ոչ փող. ես կամենում էի նոյն իսկ օսմանցու երկրում մի քանի այլ տեղեր ճանապարհորդել, բայց փող չը ստանալով, ստիպված եղայ շարունակ Մէկքա մնալ։ Սակայն այժմ այդ նեղութիւններս մոռացայ, տեսնելով ձեզ, հաջի Իբադ, տեսնելով ձեզ ողջ առողջ. էլ չեմ խօսում որդուս և ընտանիքիս մասին. ես հաճոյված եմ, որ նրանք, ձեր հովանու ներքոյ, բախտաւոր են եղել և ապրել։

—Ինչ ասել կուզէ, մի՞թէ դրա մասին որ և է կասկած կարող է լինել. Աբբասին ես չեմ ջոկել, վկայ է Ալլահը, իմ Զէյնալից. ձեր ընտանիքը նկատել եմ, իբրև սեփական ընտանիք։ Ես չեմ թողել, որ նրանց գլխի մի մազն անգամ պակասի. այ, հարցրու իրան Աբբասից, թող վկայեն և ներկայ հանդիսականները։

—Բէլի, բէլի, ճիշդ է, լսվեց ամեն կողմից։

—Բէլի, բէլի—ստիպված եղաւ թուքը կուլ տալով, ներսում զայրոյթի կրակը վառված, արտասանել Աբբասը։

Սովորութիւնը պահանջում էր չառարկել մեծերին. նոյն սովորութիւնը պահանջում էր, որ նոր եկողին անմիջապէս չը հաղորդեն դրժբաղդութեան որ և է լուր։ Հէնց այդ սովորութիւնն էր պատճառ, որ Աբբասը և մայրը, երբ հայրը եկաւ տուն, առաջին երեք օրը, երբ ամեն կողմից շնորհաւորութեան էին գալիս, ոչինչ չը յայտնեցին նրան հաջի Իբադի վարմունքի մասին։ Վերջինս շտապել էր տունը ևս խօնջաներ ուղարկել և 200 թուման արծաթ փող ծախքի համար։

Խեղճ հայր, որքան ուրախ էր. որքան գոհ էր, որքան օրհնում էր և գովում ամենքի առաջ հաջի Իբադին. խօսք չէր գտնում փառաբանելու նրա պարկեշտութիւնը, առատաձեռնութիւնը, անկեղծ բարեկամութիւնը, ընկերական հոգատարութիւնը, մեծահոգութիւնը։

Շնորհաւորութեան եկող հիւրերից ոմանք կամ քմծիծաղ էին տալիս, կամ խուսափում որ և է առարկութիւնից և կրկնում էին միայն «բէլի, բէլի, հաջի», խօսքերը։ Ո՞վ կը համարձակէր մի խօսք արտասանել հզօր հաջի Իբադի դէմ։

Վերջապէս հասաւ այն ժամը, երբ Աբբասը սիրտ առաւ յայտնել հօրը եղելութիւնը, ցոյց տալ, թէ ինչպիսի մարդ է հաջի Իբադը. բացատրել, թէ նա, դիտմամբ, ոչ իր նամակներն է թոյլ տուել հասցնել հօրը, ոչ սրա նամակները իրան և թէ բոլոր նրա խօսքերը փող ուղարկելու մասին՝ սուտ են։

Թշուառ հայր. այդ յայտնութիւնը այնքան անակնկալ էր, այնքան անհաւատալի, որ եթէ կայծակը տեղն ու տեղը հարուածէր իր օրերի և մին ու ճար զաւակ Աբբասին, այնքան չէր վշտանայ. նա ամենևին չուզեց հաւատալ. «այդ անկարելի է, որդիս, ասաց նա, դու չարաչար սխալվում ես, երևի դու քո վատ վարմունքով գրգռել ես հաջի Իբադի բարկութիւնը։»

Եւ առանց թոյլ տալու որ և է առարկութիւն, նա շտապով դուրս եկաւ տնից և գնաց քաղաք։

Աբբասը չը հետևեց նրան, մնաց տանը, մխիթարելու համար մօրը և հօրը, երբ սա կը վերադառնար տուն, սոսկալի իրողութիւնը իմանալուց յետոյ։

Այդ օր հայրը վերադարձաւ շատ ուշ. նա սաստիկ խռոված էր և յուզված. նա չը գնաց էնդերուն, չընթրեց, այլ փակվելով իր սենեակում. մտածում էր և զէյլան ծխում։ Առաւօտեան շատ վաղ հեռացաւ և միայն գիշերից մի քանի ժամ անցած, վերադարձաւ տուն։ Նա արդէն հանդարտվել էր Աբբասի առածների ճշմարտութեան մէջ. նրա տեսքը զարհուրելի էր. ալեոր մազերը երկու օրվայ մէջ բոլորովին ճերմակել էին։

—Կինս, զաւակս, ասաց նա արտասվելով, ես կործանված եմ. տունս տեղս քանդվեց. այդ բարեպաշտ, աստուածավախ հաջի Իբադը մի հրէշաւոր, անհոգի մարդ է եղել, մի աւազակ. թող Ալլահը կործանէ նրա տունը, ինչպէս կործանել է իմս։

Եւ խեղճ հայրը հիւանդացաւ ու ամբողջ մի ամիս անկողնուն ծառայեց։ Աբբասը վախենում էր, որ նա չը խելագարվի։ Հոգնամաշ օրեր, վշտալի և ցաւոտ օրեր։

(Կը շարունակվի)

Դավիդովսկի հրապարակի վրա գտնված փոքրիկ պարտէզում խաղում են շրջակայ թաղերի երեխաները։ Անցեալ օրը, հոկտեմբերի 14 ին մի ձի մտնում է պարտէզը և առանց ցէրէմօնիայի, կոխում մի 4 տարեկան երեխայի ոտը, բոլորովին ճզմում։ Երեխան III արական գիմնազիայի ուսուցիչներից մէկի որդին է։ Ահա հիանալի կարգեր. ձին մտնում է մանուկների պարտէզը և ազատ ման է գալիս, թէև պարտէզը շրջապատված է երկաթէ թելերով։

—

Երէկ, հոկտեմբերի 15 ին, Փառքի Տաճարի մէջ բացվեց ռուս և արտասահմանեան նկարիչների պատկերների ցուցահանդէս։ Ցուցահանդէսը կազմել է Թիֆլիսի կանանց բարեգործական ընկերութիւնը անկեալների և զոհամեալների օգտին։ Մուտքը 30 կոպէկ է, իսկ աշակերտները վճարում են 15 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են հետևեալը. Թիֆլիսի առաջնորդի կարգադրութեան համաձայն, հոկտեմբերի 11-ին տեղի ունեցաւ քահանաների ընդհանուր ժողով ընտրելու իրանց համար գործակալ քահանաներ։ Ձայների մեծամասնութեամբ ընտրվեցին Տէր-Գրիգոր Մանդակունի և Տէր Յովհաննէս Մարտիրոսեան աւագ քահանաները։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցին հետևեալ նոր գրքերը. 1) Հ. Առաքելեանի Հանրամատչելի Մեսրոպեան գրադարանի VIII գիրքը՝ «Հաստակութեան Նեցուկները» դրամա 4 գործ. Իբսէնի, թարգմ. գերմանական ընագրից Լ. Բաբայեանի, Թիֆլիս, 1904 թ., գինն է 50 կ., 2) «Մեր Էժանագին Գրադարանի» (հրատարակութիւն տիկին Զաբէլի) 3-րդ գրքոյկը՝ Արդար Ծերունին, Պետերբուրգ, 1904 թ. գինն է 10 կոպէկ. 3) Ռուբինի Զբաղմունքը, Բօսարմի, թարգմ. ռուսերէնից, մասն առաջին, նուէր մանուկներին, Պետերբուրգ, 1904 թ. գինն է 25 կ., 4) Աստուածային Հրահանգ Հանրապետուց (Սուրբ Գրքից թարգմանված), աշխ. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց, Թիֆլիս, 1904 թ. գինն է 80 կ.։ Պէտք է անցողաբար յայտնենք, որ այս ստացված գրքերից «Արդար Ծերունի» գրքոյկը թարգմանութիւն է Վիկտոր Հիւգոյի «Թշուառներ» հռչակաւոր աշխատութեան մի գլխի՝ Միրիէլի եպիսկոպոսի մասին և սակայն ոչ մի տեղ չէ յիշված ոչ աղբիւրը, ոչ էլ այն, թէ դա թարգմանութիւն է։

—

ՆՈՐ ՇԷՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր է՝ ինչ նոր-շէնցիները, ամբարելով այս տարվայ ստացած առատ հացահատիկները՝ սկսել են աշնանացանքը, որը մի քանի օրվայ աշնանային անընդհատ անձրևների պատճառով հետացել է գիւղացիների համար։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋը

—

Ինչո՞ւ չեն ուզում միջամտել։ «Köln. Zeitung» լրագիրը, նորից առաջ բերելով այն առարկութիւնները, որոնցով մինչև այժմ բացատրում են թէ ինչու եւրոպական դիպլոմատիան չէ միջամտում և մանաւանդ ինչու Գերմանիան մերժում է միջնորդի դեր կատարել, ասում է, որ բոլոր քաղաքակիրթ ազգերը թեթևութեամբ շունչ կը քաշեն, երբ վերջ կը տրվի պատերազմի սարսափներին, բայց ամեն մի պետական անձի համար ամենից բարձր է իր սեփական երկրի շահերը և նոյն իսկ Ամերիկան, որ այնքան ջերմապէս ցանկանում է միջնորդութիւնը, այժմ գինին ջրով է խառնում։ Ժօրէսի պերճախօս կոչը արձագանք կը գտնէ բոլոր սրտերում, բայց Ֆրանսիան չի միջամտի այնտեղ, ուր նրան չեն խնդրում, իսկ Գերմանիան, որ գաղտնի դաշնագիրներ չէ կապել Ռուսաստանի հետ, նոյնպէս կը զսպէ իրան նրա գործերի մէջ միջամտելուց։ (Спб. А.)

Գերմանիայի կողմից Ռուսաստանին ծախած նաւերի հարցի առիթով։ Լօնդոնի եապօնական դեսպանատան քարտուղարը, «Daily Express» լրագրի աշխատակցի հարցմունքին՝ Գերմանիայի կողմից Ռուսաստանին ծախած նաւերի առիթով. յայտնեց, որ, եթէ գերմանական կառավարութիւնը թոյլատրել է Ռուսաստանին այնպիսի նաւեր ծախելը, որոնք կարող են պատերազմական կրէյսէրները վերածվել, և եթէ Ռուսաստանը դարձրել է նրանց կրէյսէրներ և օգտվում է նրանցից, իբրև պատերազմական նաւերից, այն ժամանակ հարց է ծագում, արդեօք Ալբիոնի միջնադէպը չէ կարող պրեցեդէնտ համարվել։ Եթէ գերմանական նաւերը ծախվել են Ռուսաստանին նրա համար, որ ծառայեն նրան իբրև կրէյսէրներ, Գերմանիան պէտք է իմանայ, ինչ նպատակով նաւերը գնված են, և կարող էր, նոյնպիսի հիման վրա, ուղղակի համաձայնութիւն տալ և կրէյսէրների ծախելուն։ Դեսպանատան մէջ սակայն տեղեկութիւններ չը կան այդ վաճառման մասին։ (Спб. А.)

Կնքված զինադադար։ Բերլինից հոկտեմբերի 9-ին հաղորդում են, թէ Հոսմից ստացված տեղեկութիւնների համաձայն, գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի և մարշալ Օյեամայի մէջ համաձայնութիւն է կայացել՝ պատերազմական գործողութիւնները 48 ժամով դադարեցնելու, որպէս զի կարողանան սպանվածների մարմինները հողին յանձնեն։ Նոյն աղբիւրից ստացված տեղեկութիւնների համաձայն, սկսվել է Պորտ-Արտուրի նոր և եռանդուն ռմբակոծութիւն։ «Lokalanz» լրագրին հեռագրում են Տօկիօից, թէ երէկ Մօյում, եապօնական մի նաւահանգստում, Կիու-Սիու կղզու արևելեան ծովափի վրա, ափ իջեցրին 168 ռուսներ, որոնց գերի են բռնել Պորտ-Արտուրի մոտ. (Бир. В.)

Ռուս ազատերի դասաւորութիւնը։ «Iok. Anz.» լրագրի խօսքով, ռուսական արևելեան բանակի, այսինքն Սիբիրի 1 և 3 րդ կօրպուսների և Ռենենկամպֆի հեծելազօրային խմբի մասին ոչ մի տեղեկութիւն չը կայ։ Նրա դէմ գտնված Կուրօկիի բանակի մի մասը, ըստ երևոյթին, արդէն քաշ է տուած դէպի գլխաւոր բանակը։ Կուրոպատկինը բռնել է Շախէի հիւսիսային ափի բարձրութիւնները և Գաունշան լեռնանցքը Մուկդէնից դէպի հարաւ 20 կիլօմէտր հեռու մեծ յամառութեամբ, որպէս զի, հաւանօրէն, ժամանակ տայ սիբիրեան կօրպուսի միւս զօրքերին մօտենալ—(այդ կօրպուսը մասնակցել է նախորդ կռիւներին միայն մասամբ), ինչպէս և 8 րդ բանակային, կօրպուսի զօրքերին։ 8 րդ կօրպուսը ճանապարհին է գտնվում սեպտեմբերի 3-ից և նրա հասնելը կարող է առիթ տալ ռուսներին նոր արշաւանք գործել։ (Нов.)

Պորտ-Արտուրի վերջին նեցուկը։ «Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է Լօնդոնում Զիֆուից ստացված մի լուր, թէ գեներալ Ստեսսելը հնարաւոր է համարում վիջել եապօնացիներին քաղաքը, նաւաշինարանը և բոլոր ամրութիւնները, բացի Լեաոտեշանի ամրութիւններից, ուր գտնվում են ուտեստի և ռազմամթերքի շտեմարանները այնպիսի մեծ քանակութեամբ, որ բաւական կը լինի վեց ամիս տասը հազար մարդի համար։ Լրագիրը այս նկատողութեան վերնագիրը դրել է «Լուրեր Ստեսսելի դիտաւորութեան մասին անձնատուր լինել», մինչդեռ եթէ ենթադրել նոյն իսկ, որ այդ լուրը ճիշդ է, բայց լուրի մրտքից երևում է, որ խօսքը ոչ թէ անձնատուութեան մասին է, այլ յենակէտի ընտրութեան մասին վերջին յուսահատ պաշտպանութեան համար։ (Нов.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՌ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 հոկտեմբերի

ԳԻԲՐԱԼՏԱՐ, 13 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Լամանշեան էսկադրան ածուխ վերցրեց, բեռնեց ռազմամթերքներ և ուտեստի պաշարներ և պատրաստ է անյապաղ դուրս գալ ծովը։ Պատերազմական նաւերը և կրէյսէրը խստութեամբ պաշտպանում են ջրանցքը։ Հաղորդում են, որ շուտով այստեղ է սպասվում Միջերկրական ծովի էսկադրան։ Ծովային արսենալում եռանդուն գործունէութիւն է նկատվում. օր ու գիշեր աշխատում են։ Ծովային սինխրոնիզմը դիմեց ածուխի վաճառականներին հարցնելով, թէ ածուխի ոռպիսի քանակութիւն է գտնվում նրանց տրամադրութեան տակ և ինչ գնով կարելի է ձեռք բերել ածուխը։ Բրիտանական երեք զրահակիրներ և երեք կրէյսէրներ հրաման ստացան դուրս գալ ծովը հոկտեմբերի 15-ին առաւօտեան։ Լուր է պատում, որ այդ նաւերին պատուիրված է հետամուտ լինել ռուսական նաւատորմի զրահակիրներին, որոնք, ինչպէս կարծում են, կերթան Հեռաւոր Արևելք Բարեյուսոյ հրուանդանի մօտով այն ժամանակ երբ կրէյսէրները և ականանաւերը կանցնեն Գիբրալտարի ջրանցքով, դիմելով Պորտ-Սաիդ, ուր նրանք կանցնեն Սուէզի ջրանցքով։ Զէնքի է կանչված ամբողջ ականանաւային նաւախումբը Գիբրալտարում։

ՄԱԴՐԻԴ, 14 հոկտեմբերի։ (Հաւաս)։ Ծովապետ Բօժէստվէնսկի յայտնեց, որ Հիւսիսային ծովում տեղի ունեցած դէպքը անխուսափելի էր։ Նա դործել է իր խղճի դրդումով էսկադրայի ոչնչացման առաջն առնելու նպատակով։ Լիբավայից դուրս գալուց առաջ նա յիրաւի յայտնեց, որ նա ամենախիստ միջոցները ձեռք կառնէ այն իրաքանչիւր նաւի վերաբերմամբ, որ մօտենալիս կը լինի էսկադրային։ Ծովապետը ցաւում է, որ չէ կարող ուտեստի բաւականաչափ պաշար վերցնել։ Նա կը բաւականանար 400 տօննով, որ նա պահանջեց իրաքանչիւր նաւի համար, որպէս զի կարողանայ հասնել մինչև Ջրանցքը, ուր, ծովի աւելի խաղաղ լինելու պատճառով, նրա էսկադրան հնարաւորութիւն կունենայ պաշարները բեռ վերցնել բաց ծովում։

ՎԻԳՕ։ Ի պատասխան նաւահանգստի հրամանատարի կրկնակի պնդումների, ծովապետ Բօժէստվէնսկի խօսք առաց, որ էսկադրան ածուխի բեռ չի վերցնի սպանիական ջրերում և պահանջեց միայն, որ իրաքանչիւր նաւ կարողանայ վերցնել 400 տօնն ածուխ՝ մինչև Տանժէր հասնելու համար։ Գերմանական ածուխ փոխադրող երկու նաւեր կանգնած են ռուսական զրահակիրների մօտ։ Ռուսաց հիւպատոսը այցելեց էսկադրան։ Լուրերին նայելով, կառավարութիւնը հրամայել է, որ էսկադրան օրքան կարելի է քիչ մնայ Վիգոում յանցաւոր փորձից խուսափելու նպատակով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնապէս։ Ծովային գլխաւոր շտաբը յայտնում է հետևեալ երկու հեռագիրները Խաղաղ ովկիանոսի նաւատորմի 2 րդ էսկադրայի հրամանատար գէներալ-ադիւտանտ Բօժէստվէնսկու. 1) «Հիւսիսային ծովում եղած դէպքը առաջ է եկել երկու ականանաւերի պատճառով։ որոնք գնում էին յարձակման, առանց կրակի, մթութեան մէջ, նաւախմբի գլխային նաւակի վրա։ Երբ նաւախումբը սկսեց լուսաւորել ռազմական լապտերներով և կրակ բացեց, այն ժամանակ յայտնվեց ներկայութիւնը նաև մի քանի փոքր շոգենաւերի, նման ձկնորսային շոգենաւակների. նաւախումբը աշխատեց խնայել այդ նաւակները և խնդրեց դադարեցրեց կրակը, երբ ականանաւերը անհետացան տեսութիւնից։ Անգլիական մամուլը վրդովված է այն բանից, որ էսկադրային ականանաւը, թողնվելով նաւախմբի կողմից մինչև առաւօտ դէպքի տեղում, օգնութեան ձեռք չը կարկառեց վնասվածներին, բայց նաւախմբի մօտ ոչ մի ականանաւ չը կար և ոչ ոք չէր թողնվել դէպքի տեղում։ Հետևաբար, մինչև առաւօտ մնացել էր փոքր շոգենաւակների մօտ մինը այն երկու ականանաւերից, որը ջրասոյզ չէր արված, այլ միայն վնասված։ Նաւախումբը օգնութիւն չը հասցրեց մանր շոգենաւակներին, կասկածելով նրանց մասնակցութեան մէջ, ի նկատի ունենալով նրանց յամառ ձգտումը՝ պատռել նաւերի կազմը։ Մի քանիսը ամենևին կրակ չարեցին. ուրիշները՝ շատ ուշ։» 2) Էսկադրան, հանդիպելով շատ հարիւրեակ ձկնորսների, ցոյց էր տալիս նրանց պարտ ու պատշաճ ուշադրութիւնը, բացի այն դէպքից, երբ ձկնորսները օտար ականանաւերի ընկերութեան մէջ էին, որոնցից մէկը անհետացաւ, իսկ միւսը, իրանց ձկնորսների ցուցմունքով, մնաց նրանց մէջ մինչև առաւօտ։ Նրանք համարում էին նրան ռուսական և զայրանում էին, որ նա օգնութիւն չէ հասցնում վնասվածներին, բայց նա օտար էր և մնալով մինչև առաւօտ՝ ընկեր որոնելու կամ իրա վնասումները ուղղելու, վախենում էր ժամանել իրան նրանով, թէ ովքեր էին իր մեղսակիցները։ Եթէ դէպքի տեղում վնասվել են նաև ձկնորսներ, անզգոյշ կերպով ընկնելով ձեռնարկութեան մէջ, խնդրում եմ ամբողջ էսկադրայի անունից արտայայտել անկեղծ ցաւակցութիւն այն կացութեան զժբախտ զոհերին, որի մէջ ոչ մի պատերազմական նաւ, նոյն իսկ խորին խաղաղութեան ժամանակ, չէր կարող այլապէս վարվել։»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամայված է կամաւոր նաւատորմի «Սմօլէնսկ» և «Պետերբուրգ» շոգենաւերը մացնել նաւատորմի նաւերի ցուցակի մէջ, դասելով նրանց կրէյսէրների շարքը և յատկացնելով նրանց՝ առաջինին «Մոսկվա» իսկ երկրորդին՝ «Դնէպր» անունները։

ԼՕՆԴՕՆ, 13 հոկտեմբերի։ «Գլոբ» լրագրի խօսքով, Պորտսմուտում նկատելի են պատերազմական անսովոր պատրաստութիւնների նշաններ։ Հրամաններ են ստացված պահեստում գտնվող մի քանի նաւերի կազմը ու պատրաստ լինելը շտապեցնել։ Լողալու պատրաստ կրէյսէրները հրամանագրութիւն ստացան պատրաստի լինել ամենակարճ միջոցում ծովը դուրս գալու համար։—Ազատամիտ կուսակցութեան պարագլուխները, յայտնի ազատ և բանուորների խմբակցութիւնների առաջնորդների ճառերը, «Դէյլի Տելեգրաֆ» լրագրի խօսքով, ժամանցոյց են անում երկրի կատարեալ համերաշխութեան վրա։ Չէ եղել դրա նման մի համերաշխութիւն Նապոլէօնի պատերազմների ժամանակից։ Բոլոր ուղղութիւնների պարագլուխները մի և նոյն կարծիքը յայտնեցին, միաձայն պահանջելով, որ Անգլիան չը յապաղի, բայց միջոցներ ձեռք առնէ, որպէս զի քաղաքակիրթ աշխարհի շահերի տեսակէտից վերացնվի բոլորին անխուսափելի սպառնող վտանգը։—Մինիստրների խորհուրդը հրաւիրված է հոկտեմբերի 15 ին։

ՎԻԳՕ, 14 հոկտեմբերի։ (Հաւաս)։ Այն վայրկեանին, երբ Բօժէստվէնսկի դուրս էր գալիս զինուորական նահանգապետի պալատից մի ծերունի համբուրեց նրա ճակատը։ Ամբոխը սկսեց երկարատև ծափահարել։ Ծովապետը զգացված էր սարքած ցոյցերով։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 14 հոկտեմբերի։ Կօշուտ մի առաջարկութիւն մտցրեց պատգամաւորների ժողովում, որպէս զի մինիստր-նախագահը հրաւիրէ արտաքին գործերի մինիստրին՝ պաշտպանելու ռուս-եապօնական պատերազմը դադարեցնելու համար Միացեալ-Նահանգների արած առաջարկութիւնը։

ՖԻՈՒՄԷ։ Այստեղ գտնվող անգլիական էսկադրան հրաման ստացաւ միանալ Պոլիի մօտ կանգնած անգլիական էսկադրայի հետ, գնալ դէպի արևմուտք և միանալ Գիբրալտարի մօտ Միջերկրական էսկադրայի հետ։

15 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ, 13 հոկտեմբերի։ Երկրագործութեան մինիստրը ասաց Գլազկուում. «Մեծ-Բրիտանիան պէտք է լիակատար հաստատուն ստանայ և բաւականաչափ երաշխաւորութիւններ, թէ այդպիսի միջնադէպեր այլ ևս չէն կրկնվի։ Ենթադրում եմ, որ մենք կարող ենք յուսալ, թէ ռուսական կառավարութիւնից ցանկալի ոգով պատասխան կը ստանանք։ Մենք մտածում ենք, որ մեզ ոչ մի կերպով պէտք չի լինի աւելի առաջ գնալ և մեր բարեկամական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ ամենևին չեն վնասի։

ԽԱՐԲԻՆ, 15 հոկտ. (Սեպ. թղթակից)։ Վերջին օրերը բանակում տեղի են ունենում յաճախակի հրաձգութիւններ առաջաւոր մասերի հետ։ Լուրջ ընդհարումներ չեն եղել։ Եապօնացիները, տեղաւորման ամբողջ գծի վրա կառուցանում են խրամատներ, որից կարելի է եզրակացնել, թէ հակառակորդը դիտաւորութիւն չունի արշաւանք սկսել, այլ մտադիր է սպասել արշաւման մեր կողմից։—Տելինում շինված է սպանդանոց, ուր պատրաստվում է մի հազար գոկտոր Վլասեվիչի սիստեմով։ Մուկդէնում բացված է այդ ազգի պահեստ, որտեղից բաց է թողնվում բանակի միւս մասերի համար։ Գործի կազմակերպութեան համար կանչված է ինքը հնարողը։ Այն օֆիցէրները, որոնք արշաւանքի ժամանակ կերակրվել են այդ արշաւական—դրպանային ոգով, ամենալաւ կերպով խօսում են նրա մասին։

ՎԻԳՕ, 14 հոկտ.։ Կառավարութիւնը թոյլատրութիւն տուեց բաց թողնել 400-ական տօնն ածուխ ամեն մի ռուսական նաւին։ Գերմանական ածխագործները գնացին Տանժէր։

ՄՈՒԿԴԷՆ, 14 հոկտ. (Սեպ. թղթ.)։ Այսօր և երէկ ցանցառ թնդանօթաձգութիւն կար մեր աջ թևի վրա։ Գիշերային օրեր են լինում։ Ցրտերը նուազել են։

ԽԱՐԲԻՆ, 14 հոկտ. (Սեպ. թղթ.)։ Պուտիլեան թմբի մօտ դիրքերի վրա մեր զօրքերը թաղեցին 1500 եապօնական դիակ տալով նրանց, զինուորական յարգանքներ։ Շատ դիակներ չեն հաւաքված։ Մեր կորուստները այդ թմբի մօտ եղած կռի ժամանակ սպանված և վիրաւորված—93 օֆիցէր և 2300-ից աւելի զինուոր։

ԿԱՐԴԻՖ, 14 հոկտ. (Ռէյտէր)։ Համբուրգ—ամերիկական գծի շոգենաւերը, որոնք Բազրիում ածուխ էին բեռնում բալտիական էսկադրայի համար շուտով կը թողնեն նաւահանգիստը։ Մինչև ներկայ ճգնաժամը նրանք մտադիր չէին գնալ հոկտեմբերի 20-ից առաջ, բայց այժմ շտապում են բեռները վերցնել, դէպքերի պատճառով։ «Բետանիա» շոգենաւը 9000 տօնն ածխի բեռնով մեկնեց առաւօտեան։ «Արտեմիսիա» շոգենաւը կանգնաց է աւազանում 8000 տօնն բեռնով, պատրաստ դուրս գալ ծովը։ Հետևեալ շոգենաւերը կը մեկնեն անմիջապէս։

ՎԻԳՕ։ (Ռէյտէր)։ Ռուսական էսկադրայի մի մասը դուրս եկաւ այսօր, շարունակելով ճանապարհը դէպի Հեռաւոր Արևելք։ Ծովապետ Բօժդեստվենսկին տեղեկացրեց, թէ մտադիր է էսկադրայի մեծ մասի հետ գնալ Տանժէր։

ՏԱՆԺԵՐ, 14 հոկտ, (Ռէյտեր)։ Ռուսաց էսկադրան այստեղ ածխի բեռն կը վերցնէ։ Ֆրանսիական երկու կրէյսէր հրաման ստացան մեկնել նաւահանգստում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գենեռալ լէյտենանտ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թ. հոկտ. 15 թց. «Հոկտ. 13-ին մեր հեծեալ մասերը սաստիկ խուզարկութիւն կատարեցին Խէկեուտայի ուղղութեամբ։ Իշխան Թումանովի հրամանատարութեամբ մի դիվիզիոն ստիպեց հակառակորդին Խացլատաձէ գիւղի մօտ Խունխէի աջ ափին, Խեկեուտայի գիւղի դէմ ռազմական կարգ պարզել։ Մի զօրախումբ, բաղկացած 1500 հոգի հետեակից, 4 թնդանօթներով և 2 էսկադրօնից ու Եագոլին եսաուլի հարիւրակներից, մի ուրիշ հարիւրակի թեւ կողմից ցոյց տուեց կրակի աջակցութեամբ, յարձակվեց հակառակորդի հետեակի վրա, որը փախաւ Խացդատաձու գիւղը։ Մեզ մօտ սպանվեցին 3 և վիրաւորվեցին 2 զինուոր։ Հոկտեմբերին 13-ին մեր աջ թեւի վրա խուզարկութիւն կատարվեց մի քանի կամաւորական կօմանդաների ձեռքով. ընդհանուր շտաբի փոխ գնդապետ Դեսսերի ընդհանուր ղեկավարութեամբ։ Մէկ ու կէս ժամվայ պատրաստութիւնից յետոյ արագաձիգ և թնդանօթային բատարէաների կրակով, կօմանդաները երեկոյեան ժամը 11-ին շարժվեցին դէպի Զալլօնպու և Անանուն գիւղերը, որ առաջինից դէպի արևմուտք է։ Վերջին գիւղը կռուով վերցրվեց մեր կամաւորների ձեռքով։ Հակառակորդի այն մասերը, որոնք գրաւել էին այդ գիւղը, նահանջեցին։ Մեզ մօտ վիրաւորվեցին կապիտան Նաղէժնի և պօտպօրուչիկ Լէբեզնին։ Նոյն գիւղը խուզարկութեան ենթարկվեց կամաւորների ձեռքով, դեռ հոկտ. 9 ի գիշերը, և այդ ժամանակ շտաբս-կապիտան Վօրօտինցէվ, խուժելով գիւղը մի քանի զինուորներով, անձամբ պաղ զէնքով վերցրեց եապօնական երկու պահակ։ Մեր կամաւորների սարքած թակարդի մէջ ընկաւ հոկտ. 13-ին, լուսածագին, եապօնացիների մի խումբ, որից երկուսը սպանվեցին և 5-ը վիրաւորվեցին. Եապօնացիների վրայից հանած հագուստներից երևաց, որ նրանք պատկանում էին 21-րդ պահեստային գնդեր։ Հոկտ. 13-ի գիշերը կամաւորները մեծ շփոթմունք առաջ բերին եապօնացիների բանակում Շուչալինեան լեռնանցքից դէպի արևմուտք։ Այնտեղ բարձրացաւ օդապարիկ, որը մեր կամաւորների մի քանի հրաձգութիւնից յետոյ, ցած իջաւ։ Հոկտ. 14-ին առաւօտեան ժամը 7-ից մինչև մութը կռիւը հակառակորդի երկու բատարէան հարուածում էին բարձրութիւնը կռանտից, երկու վերստ հեռու Եանսինտան գիւղից, որ գրաւել էին իբրև նկատողական կէտ։ Կէսօրվայ ժամը 4 ի մօտ, եապօնացիները յարձակվեցին թուրքի վրա։ Մեր վաշտերը սաստիկ դիմադրեցին հակառակորդին և հեռացան, գրաւելով յաջորդաբար երկու դիրք, գլխաւոր դիրքի վրա։ Մեր արտիլէրիան գլխաւոր դիրքից կրակ բացեց և ստիպեց եապօնացիներին հեռանալ կռատնից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՀԻՒԾԱՆԵՐ—9—10 ժ. առաջ., ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութ. ամ։
Զ. Ի. ԲԱՆԱՄԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՇԱՐԱԳԻՏՅԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Ս ՈՒԼՈՎ սամնարոյժ. 9—11 ժ.
ԳՐԵՆԳԻՆԵՐԸ
ԳԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲԻՆԻԱ—7—7½ ժ. ամենարձութեան և կանանց հ.։
Դ. Ս. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Գ. Ա. ԱՐԳԱՋԻՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ս. ԱՒՎԱՆԻՏՍԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական ատամնաբուժ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և դիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ՅԵՐԵԿՎԱՅ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ
ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ — ԱՐԱԲՍԵԱՆԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ
ՀԱՅ-ՎՐԱՑ ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ
Կիրակի, հոկտեմբերի 17-ին
Կը ներկայացնէ վրացերէն լեզուով
ՍԻԲԻՐԱԿԱՆ
Կօմ. 3 գործ. հեղ. Ցագարելիի։
Մասնակցում են.—Տ.տ. Ափխազիշվիլի, Փիրուզեան, օր.օր. Բեգիշանեան, Բուչուկուրի, պ.պ. Բաղդասարեան, Գիլիկուրաշվիլի, Գրիգորեան, Ղուշչեան, Մարկոսեան, Մէտարելելի, Միրվելով, Սալաղայա, Փիրուզեան և ուրիշները։
Սկիզբն է ճիշդ 11½ ժամին առաւօտեան։
Տեղերի գինը 10-ից մինչև 50 կօպէկ։
Դիրեկցիա—Արաքսեանի

ԲԺՇԿԱՊԵՏ
Յ. Յ. ՏԷՐՋԱՆԵԱՆՑ
տեղափոխվեց Վիլիամինօվսկայա № 12, տուն Իբրահիմ բէկի։
շ. և. ո. 3—3

Բժկ. Վ. Արծրունիի
Վերսկսել է ընդունելութիւնը ԲԳԻ, ՔԹԻ և ԱԿԱՆՋԻ հիւանդութիւնների համար։
Гановская ул. д. Тамамшева. (և. հ. կ.) 7—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Լելիամինօվսկայա փողոց № 8։ (և.ո.) 31—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Բժշկ. Բ. Նաւասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. ե. հ.) 81—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններին. ունի բէնտգէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825.
(շ. և. հ. չ.) 95—105

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՕՐ. Շ. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Վերադառնալով վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9 ից—2 ժ. երեկոյեան 4-ից—7 ժ.
Հասցէ Վելեամինօվսկայա № 6։ 5—12

ԲԺՇԿ. ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախ՝ օրդինատոր Մոսկվայի Համալսարանի Կլինիկայի ընդունում է հիւանդներին՝
ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ և ՄՈՐԹՈՒ
հիւանդութիւններով ամեն օր 10—11 ժ. առաւօտեան և 6—8 ժ. երեկոյեան։ Հասցէն Բարիշչէվսկի փողոց, տուն № 1 «Պաժարնի կօմանդի» դիմաց, տելէֆոն 711.
(ա. օ.) 8—10

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների
ԲԺԻՇԿ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՂԱԶԱՉԵԱՆՑԸ
Ընդունում է ամեն օր՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 11-ը, երեկոյեան 5-ից մինչև 7-ը։ Սօլոլակ, Բարիշչևսկի փողոց, տուն Գիրգիտեանի № 30, տելէֆոն № 847. (կ.ե.հ.շ.) 3—15

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր 12—2 առաւօտ. և 5—6 երեկ.
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի—դեղատան կից։ (շ. շ.) 15—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Թիֆլիսի Հալաբարի ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու յարգելի ծխականներին հրաւիրում եմ ծխական ժողով գումարելու նոյն եկեղեցում կիրակի, ասսիս 17-ին, առաւօտեան 10½ ժամին, եկեղեցու վերաբերեալ մի քանի կարևոր հարցերի մասին խորհրդակցելու համար։
Երէցփոխ՝ Գէորգ Բարուրեանց
(հ. շ. կ.) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6. ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեսնօվսկայա փ. № 20.
(ռ. կ. ե.) 18—30

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Զեռնարկութիւն Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի
Այսօր, շաբաթ, հոկտեմբերի 15-ին մասնակցութեամբ տ.տ. Դոնսկոյ-Էյխենվալդի, Պետրովա-Զվանցեվայի, Զասլավսկայի, պ.պ. Սիկաչէնսկու, Կօմարովի, Դեմեանեկոի, Սպերանսկու, Զելինսկու և Մուրատովի։
կը ներկայացվի առաջին անգամ նոր պարագաներով
«ՎԷՐՏԷՐ»
օպեր. 4 գործ. երաժշտ. Մասսընէի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8 ին։
Վաղը, կիրակի, հոկտ. 17-ին, գաստրոլ Պետրովա - Զվանցեվայի, ժամանակցութեամբ Դոնսկոյի կը ներկայացվի ԿԱՐՄԷՆ, օպեր. 4 գործ. երաժշտ. Բիզէի։ Երկուշաբթի, հոկտեմբերի 18-ին Թիֆլիսի Ի արական գիմնազիայի 8 րդ դասարանի աղքատ աշակերտուհիների օգտին կը ներկայացնվի ՖԱՈՒՍՏ օպեր. 5 գործ. երաժ. Գունոյի։
Պատրաստում են ներկայացնելու առաջին անգամ Թիֆլիսում նոր պարագաներով ՆԷՐՈՆ օպ. 4 գործ. երաժշտ. Ռուբինշտէյնի։
Տոմսակները ծախվում են։
1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլլէր

ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ—ԱՐԱԲՍԵԱՆԻ ԹԱՏՐՕՆ
Շաբաթ, հոկտեմբերի 16-ին
Հայ և վրաց թատերասէրների խումբը, բարեհաճ մասնակցութեամբ պ. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ
Ի կը ներկայացնէ Հայերէն լեզուով
ԱՐՇԱԿ Բ.
դրամա 5 գործ. հեղ. Մ. Պէշիքթաշլեանի.
ՊՎրացերէն լեզուով
ՕՐՀԱՍԱԿԱՆ ԴԷԲԻՒՏ
Վօդ. 1 գործ. հեղ. Լէնսկի, թարգ. Աիսսպ.
Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան։
Տեղերի գները 1 ր. մինչև 20 կօպէկ։
Խաղամիջոցներին կը նուագէ երաժշտական խումբը։
Տոմսակները վաճառվում են թատրոնի կասայում։
Կարգադրիչ՝ Մ. Տէր-Առաքելեան

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Ս. Ս. Աֆանասեանը
Գանձակից մշտապէս տեղափոխվել է բնակվում է Թիֆլիսում Վօզնեսենսկի փողոց Գալաքարօվի տուն № 9. (ա. օ.) 15—30

Ծախվում են
„ԹԱՌԵՐ“
ձեռնտու գներով, Թիֆլիսում, «ԹԻԼԻՊՈՒՇՈՒՐԻ» անուանված ասիական բուֆէտում։
(ա. օ.) 8—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
№ 1 ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄԵՏԵՆԱԳԻՐԸ № 1
ԼԷՕ
Ա. ՄԵՍՐՈՊ
Հրատարակութիւն Ա. Պողոսեանի
էջ 336
Գինն է 75 կօպ. (2 ֆր.) ճանապարհած. 1 ր. (2 ֆր. 50 սանտ.)։
Վերադիր վճարով ստանալու համար ուղարկելու է 25 կօպ. նամակադրոշմ։
Կարելի է ստանալ՝ Թիֆլիս, «Գուտենբերգ» գրավաճառանոցից և Մոսկվա, Արսեն սարկաւագ Սիմեոնեանից։
(Армянскій пер., домъ армянской церкви)
2—10

100 ր.
վարձատրութիւն հրան, ով որ կը հաղորդէ ալէքսանդրօպոլցի Արշակ Կարապետեանի (զազազ Հաջու տղայ) բնակութեան տեղը։ Պէտք է յայտնել եղբօրը հետեւեալ հասցէով. Нахичевань-Донъ, семинарія, учителю Арутюну Карапетьянъ. 3—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՌԱՁՆԱԿԱՐԳ ՃԱՇԱՐԱՆ
„ԱՆՕՆՆԱ“
Ամեն օր նուագում է ՅԱՅՏՆԻ ՐՈՒՄԻՆԱԿԱՆ ՕՐԿԷՍՏՐ, ցերեկով 2 ժամից մինչև 5 ժամը, երեկոյեան 9½ մինչև 2 ժամ։
2—4 (ու. շ. ե) Ե. Տ. Բօնդարէնկո

Լոյս տեսաւ
Տ. ԵԺԻ
ԼՈՒՍԱԴԻՄԻՆ
Վէպը, երկրորդ տպագր.. գինն է 1 բուբլի։
Դիմել՝ Баку, Книжный маг. С. Д. Арутюнова. (ա. օ.) 5—25

Լոյս տեսաւ Մ. ՉՄՇԿԵԱՆԻ, առաջիկայ
1905 „ԾՈՑԻ“ Թ. ՕՐԱՑՈՅՑԸ.
Իսկ ամսիս վերջին՝ «ՍԵՂԱՆԻ», «ՊԱՏԻ» և «АРМЯНСК. КАЛЕНДАРЬ» օրացոյցները։
Ցանկացողները թող շտապեն յայտնել, որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել։
Հասցէն. Թիֆլիս՝ Մակար Չաշկեան։
(և. շ.) 2—13

ԾԱԽՎՈՒՄ Է
մի տուն իր գետնովով միասին—306 քառակուսի սաժէն, ճակատը 16 սաժ., Կուկիայում, Ալէքսանդրովսկի փողոց № 33. Հ. շ. 9—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ 10-ՐԴ №-Ը—ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
1. Փոթորիկը, Ա. Անարոնեանի, 2. Վանի նահանգը ներկայումս. (շարունակ.) Ծերուկի, 3. Ընկերիս յիշատակին, ոտան. Աւ. Իսահակեանի. 4. Մի քանի օր Արցախում և Սիւնիքում Լ. Ս.-ի. 5. Ամբողջ գիշերներ, ոտան. Ոնոփրիոս Անսփեանի. 6. Պարսկաստանի քիւրդերը, Ե. Ֆրանգեանի, 7. Զարզ Դիկենզի ծննդեան արձակ երգերից, թարգմ. բնագրից Մխիթար Տէր-Անդրէասեանցի, 8. Դարալագեազ կամ Վայոց ձոր, Մ. Տ. Ա. ի, 9. Ամբոխային հոգեբանութիւնից, Տ. Ռաշմաճեանի, 10. Գիտութիւնը և հավատարմանները Ճապոնիայում, Կ. Միվարի, 11. Կովկասի թուրք մամուլը, Տիգրանի, 12. Քննադատութիւն և մատենախօսութիւն.—1) Վ. Փափազեան՝ «Խելօք աղաղոր» և «Դրախտը».—2) Մաքս Հայբէ՝ «Սիստէմ». Օսկար Վիլդէ՝ «Երջանիկ իշխանը».—Զ.։ 3) Իսհանի Ահօ՝ «Երկու նովելլա».—Զ.։ 4) Խաչատուր Բաբայեան՝ «Վաղաժամ մահ».—Զ.։ 5) Քամալեանց Ս. «Ժամանակը ոսկի է».—Կ. Հ.։ 13. Նոր ստացուած գրքեր։
Ներքին տեսութիւն.—1905 թ. «Մուրճ» ի բաժանորդագրութեան առիթով.—Ներքին գործոց նոր մինիստրի հայեացքները և մամուլի ու հասարակութեան խանդավառ վերաբերմունքը։—Բարձրագոյն ուկազ ներք. գործ. մինիստրի օգնականին։—Դատաստանական Պալատի մի քանի որոշումները։—Մահմէդական ցեղերի սիմինարիա Թիֆլիսում։—Դէպի Նուխի և Շուշի երկաթուղի։ Լ. Ս.։
15. Արտաքին տեսութիւն.—Ռուս-ճապոնական պատերազմը։—Հովանաւորող քաղաքականութեան պայքարը, իրլանդական և հնդկական հարցերը Անգլիայում։—Թիւրքական լուրեր։ Լ. Ս., 16. Պարբերական հրատարակութիւններ, 17. Յայտարարութիւններ, 18. Ի Յաւելված. Զէյմս Մորիէր՝ «Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ, Մ. Կարապետեան. 241—280, 19. II Յաւելված, իշխ. Ա. Սուվորատովի՝ «Դաւաճանութիւն» դրամա 5 արար., թարգմ. ռուսերէնից Ալ. Ծատուրեան։

Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան վարչութիւնը

Սրանով յայտարարում է, որ ընկերութեան կանոնադրութեան § 77-ի համաձայն՝ 1904 թվի հոկտեմբերի 27-ին, ցերեկվայ ժամը 1-ին ընկերութեան շինութեան մէջ, Պուշկինեան փողոց, սովորական տան մէջ լինելու է հրապարակային աճուրդ կամաւոր գնից սկսած, ծախելու հետեւեալ կալուածները, որ մնացել են ընկերութեան վրա.

1) Բրթակով Գ. Ի.—մի հողաբաժին, 145 քառ. սաժէն տարածութեամբ, վրան մի երկյարկանի տնով՝ ներքնայարկը, 4 հատ երկյարկանի փիլիգէլները հետը, X քաղաքամասում՝ I Մալականեան փողոցում։

Այդ կալուածի վրա այժմ կայ 15,377 ր. 83 կ. իսկական պարտք և 1231 ր. 71 կ. ապառիկ։

2) Տէր-Պողոսեան Օ. Դ.—100 քառակ. սաժէննոց մի կտոր հող, վրան 3 յարկանի մի տուն, ներքնայարկով և կողմնակի շէնքերով, I քաղաքամասի Ուդերնի փողոցի վրա։

Այդ կալուածի վրա այժմ կայ 21,039 ր. 02 կ. իսկական պարտք և 2457 ր. 99 կ. ապառիկ։

Վերոյիշեալ կալուածների աճուրդը կը սկսվի այն գումարից, որ կառաջարկեն գնել ուզողները, իսկ աճուրդի հաստատութիւնը կախված կը լինի Ընկերութեան Վարչութեան և Վերահսկող Կոմիտէի միացեալ նիստից։

Աճուրդի մասնակցել ցանկացողները պէտք է, իրը գրաւական, ընկերութեան գանձարանին յանձնեն 500-ական բուբլի յէշված ամէն մի կալուածի համար։

Եթէ գնողը ցանկանայ, նրա վրա կը դարձվի յէշված կալուածների հիմնական պարտքը։

Աճուրդի մանրամասն պայմանները և ծախվող կալուածներին վերաբերող բոլոր թղթերը և դօկումէնտները ցանկացողները կարող են տեսնել, նոյնպէս և ստանալ անհրաժեշտ տեղեկութիւններ Ընկերութեան Վարչութիւնից՝ ամեն օր առաւօտեան ժամը 10—2-ը, բացի կիրակի և տօն օրերից։ (հոկ. 16,19,21,23,25 57) 1—6

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го октября 1904 г. Տպարան «ՀԵՐՄԵՍ» Типог. Т-ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ» Мад. ул. № 15.